# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*29 փետրվարի 2024թվականի N 262*

ՏԻԳՐԱՆ ՍՈՒՐԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 12-ի № 170 որոշումը և 2024 թվականի փետրվարի 22-ի անշարժ գույքն աճուրդով վաճառելու մասին №1 արձանագրությունը.

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաք, Հարավային թաղամաս, Սպանդարյան փողոցին հարող տարածք հասցեում գտնվող անշարժ գույքը և դրա սպասարկման և պահպանման համար նախատեսված հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական № 04072023-07-0061, գաղտնաբառ՝ NIRLXUUMRZ1M) 2 070 000 (երկու միլիոն յոթանասուն հազար) ՀՀ դրամ արժեքով օտարել Հրազդան համայնքի ք. Հրազդան Ռ. Միքայելյան փողոց թիվ 2 շենքի 33 բնակարանի բնակիչ Տիգրան Սուրենի Հարությունյանին:
2.Աճուրդով ձեռք բերված Հրազդան քաղաքի Սպանդարյան փողոցին հարող տարածք հասցեում գտնվող ոչ բնակելի շենքի և դրա սպասարկման և պահպանման համար նախատեսված հողամասի համար կնքել գույքի առուվաճառքի պայմանագիր:
3.Որոշման կատարման հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման և տրանսպորտի բաժնի պետ Գեղամ Հակոբյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

29 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*29 փետրվարի 2024թվականի N 263*

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 189-Ն որոշման հավելվածը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.
1)օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի՝ 7 (յոթ) հատ,
2)օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի՝ 7 (յոթ) հատ, 3) տեխնիկական հեղուկների վաճառք՝ 1 (մեկ) հատ,
4) համայնքի անվանումը օգտագործելու՝ 1 (մեկ) հատ,
5)հանրային սննդի կազմակերպու և իրականացում՝ 2 (երկու) հատ,
6)ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացման՝ 1 (մեկ) հատ,
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

29 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2024 թ. փետրվար 29-ի
N 263 որոշման

# ՑՈՒՑԱԿ
# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգ անուն/ կամ կազմակերպաիրավական տեսակը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ, գովազդի մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ա/Ձ «Ինգա Զոհրաբյան Վասպուրականի» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս շենք 5/24 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս շենք 5/15 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 2 | Ա/Ձ «Ինգա Զոհրաբյան Վասպուրականի» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս շենք 5/24 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս շենք 5/15 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 3 | Ա/Ձ «Սիլվարդ Հովհաննիսյան Համբարձումի» | Ք. Հրազդան, Երևանյան փ. 8/2 | Ք. Հրազդան, Երևանյան փ. 8/4 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |
| 4 | Ա/Ձ «Սիլվարդ Հովհաննիսյան Համբարձումի» | Ք. Հրազդան, Երևանյան փ. 8/2 | Ք. Հրազդան, Երևանյան փ. 8/4 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |
| 5 | Ա/Ձ «Գայանե Վիրաբյան Վիրաբի» | Ք. Հրազդան, Րաֆֆու 1/10 | Ք. Հրազդան, Խանջյան 21 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 6 | Ա/Ձ «Գայանե Վիրաբյան Վիրաբի» | Ք. Հրազդան, Րաֆֆու 1/10 | Ք. Հրազդան, Խանջյան 21 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 7 | Ա/Ձ «Արամ Հակոբյան Հովնանի» | Ք. Հրազդան, Շահումյան 211/1 | Ք. Հրազդան, Շահումյան 211/1 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 8 | Ա/Ձ «Արամ Հակոբյան Հովնանի» | Ք. Հրազդան, Շահումյան 211/1 | Ք. Հրազդան, Շահումյան 211/1 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 9 | Ա/Ձ «Մելանյան Միքայելյան Նորիկ» | Ք. Հրազդան, Կոճոռ 41 | Ք. Հրազդան, Կոճոռ 41 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 10 | Ա/Ձ «Մելանյան Միքայելյան Նորիկ» | Ք. Հրազդան, Կոճոռ 41 | Ք. Հրազդան, Կոճոռ 41 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 11 | Ա/Ձ «Արմիկ Գյուրջյան» | Լեռնանիստ 2փ., 2փկղ., տուն 12 | Լեռնանիստ 1-ին փ., թիվ 54 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 12 | Ա/Ձ «Արմիկ Գյուրջյան» | Լեռնանիստ 2փ., 2փկղ., տուն 12 | Լեռնանիստ 1-ին փ., թիվ 54 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 13 | Ա/Ձ «Ռայա Ուսոյան Ջանգիրի» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 74/31 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս շենք 33 թիվ 2 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 14 | Ա/Ձ «Ռայա Ուսոյան Ջանգիրի» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 74/31 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս շենք 33 թիվ 2 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 15 | Ա/Ձ «Էդգար Նազարյան Աշոտի» | Ք. Հրազդան, Շահումյան 151 | Ք. Հրազդան, Շահումյան 332 | ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 16 | Ա/Ձ «Էդգար Նազարյան Աշոտի» | Ք. Հրազդան, Շահումյան 151 | Ք. Հրազդան, Շահումյան 332 | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 17 | Ա/Ձ «Գայանե Կիզիրյան Սուրենի» | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 55/35 | Ք. Հրազդան, Միկրոշրջան Դ/1 թ-ս | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին կիսամյակի համար |
| 18 | Ա/Ձ «Արտավազդ Հովհաննիսյան Հրայրի» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 76/15 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 4-րդ փ., 16/1 | տեխնիկական հեղուկների վաճառք | հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |
| 19 | «Հրազդանի վերելակ» ՍՊԸ | Մեղրաձոր ուտն 3 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս թիվ 27 | համայնքի անվանումը ֆիրմային անվանման մեջ օգտագործելու | հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*29 փետրվարի 2024թվականի N 264*

### ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Հրայր Ղազարյանի 2024 թվականի փետրվարի 27-ի դիմումը.

## *Ո Ր Ո Շ Ու Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Լեռնանիստ գյուղի 3-րդ թաղամասի 77 տան բնակիչ Հրայր Ղազարյանին ժառանգության իրավունքով փոխանցված /Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտարի կողմից 2023 թվականի դեկտեմբերի 6-ին, տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցված գրանցամատյանում՝ N 5117, ժառանգական գործ 04/ Կոտայքի մարզի Լեռնանիստ գյուղում գտնվող հողամասին (ծածկագիր՝ 07-033-0036-0035) տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Լեռնանիստ, 3-րդ փողոց 51:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

29 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*29 փետրվարի 2024թվականի N 265*

### ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ և 8-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Արմեն Հունանյանի լիազորված անձ Գևորգ Մարտիրոսյանի 2024 թվականի փետրվարի 21-ի դիմումը.

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Շահումյան փողոցի թիվ 201 տան բնակիչ Արմեն Հունանյանին ժառանգության իրավունքով փոխանցված /ՀՀ Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտարի կողմից 2024 թվականի փետրվարի 21-ին, տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցված գրանցամատյանում՝ թիվ 652, ժառանգական գործ 36/ Հրազդան քաղաքի Շահումյան փողոց 201Ա հասցեում գտնվող բնակելի տան հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Ս. Շահումյան փողոց 201/2:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

29 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*29 փետրվարի 2024թվականի N 266*

## ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՎՈՂ ՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ, 7-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Գագիկ Սահակյանի 2024 թվականի փետրվարի 21-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 37 շենքի թիվ 15 բնակարանի բնակիչ Գագիկ Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 30112023-07-0175, գաղտնաբառ՝ WLAQFWUDEMNQ/ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի Ա. Ալավերդյան փողոց 35/11 հասցեում գտնվող հողամասի 0.00185հա մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամասի Ա. Ալավերդյան փողոց 35/12, իսկ 0.00386հա մակերեսով մասինը թողնել նույնը՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամասի Ա. Ալավերդյան փողոց 35/11:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

29 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

*29 փետրվարի 2024թվականի N 267*

## ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N 96 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1.Հրազդան համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի 29-ի «Ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրա սպասարկման ու պահպանման համար նախատեսված հողամասի նկատմամբ Հրազդան համայնքի սեփականության իրավունքը ճանաչելու մասին» N 96 որոշման 3-րդ կետում «23.82քմ» թիվը փոխարինել «23.8քմ» թվով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

29 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*01 մարտի 2024թվականի N 268*

ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ բաժնի 136-րդ կետով, հիմք ընդունելով «Ագրոհոլդինք-ընտանիք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ա.Մկրտիչյանի 2024 թվականի փետրվարի 27-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.«Ագրոհոլդինք-ընտանիք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը թույլատրել Հրազդան քաղաքում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 26102022-07-0099, կադաստրային ծածկագիր՝ 07-001-0878-0029) հողամասում ժամանակավոր տեղադրել տնակ-գրասենյակ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

01 մարտի 2024թ.
ք.Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*04 մարտի 2024թվականի N 269*

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1. Հրազդան համայնքի 2024 թվականի բյուջեի ծախսային մասում ՝1 բաժնի 6 խմբի 1 դասի 51 ‹‹Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ›› ծրագրի 4823 ‹‹Պարտադիր վճարներ» հոդվածում ‹‹11000.0›› թիվը փոխարինել ‹‹9500.0›› թվով, 4822‹‹Այլ հարկեր›› հոդվածում‹‹0›› թիվը փոխարինել ‹‹1500.0›› թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

04 մարտի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*04 մարտի 2024թվականի N 270*

### ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ՏՈՆԱԾԱՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԱՑԱԾ ՀԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 215-Ն «Հրազդան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշմամբ հաստատված հավելվածի 1.6.1.51 ծրագրի «Այլ հարկեր» 4822 հոդվածով նախատեսված ծախսերից 1033091 / մեկ միլիոն երեսուներեք հազար իննսունմեկ/ դրամ գումարը որպես հարկային պարտավորություն փոխանցել ՀՀ պետական բյուջե:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

04 մարտի 2024թ.
ք.Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# ***Ո Ր Ո Շ Ու Մ***

*05 մարտի 2024թվականի N 271*

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 117 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնից ստացված նյութերի հիման վրա: Նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հրազդան համայնքի Քաղսի բնակավայրի 1-ին փողոցի 62/1 հասցեում կատարվել է շինարարական աշխատանքներ՝ խախտելով «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 16-րդ և 22-րդ հոդվածների պահանջները:

Դեռևս 2023 թվականի հոկտեմբերի 10-ին Հրազդան համայնքի Քաղսի բնակավայրի 10-րդ փողոցի 2-րդ նրբանցքի 7 տան բնակիչ Միտյա Խուրշուդյանին տրամադրվել է N 117 շինարարության թույլտվություն՝ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Քաղսի 1-ին փողոցի 62/1 հասցեում առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենք կառուցելու համար: Շինարարության թույլտվությամբ նախատեսվել է շինարարական աշխատանքները իրականացնել մինչև 2025 թվականի հոկտեմբերի 10-ը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի ընթացքում լսմանը մասնակցելու համար հրավիրվել է կառուցապատող Միտյա Խուրշուդյանը և ապահովվել է վերջինիս արտահայտվելու և լսված լինելու իրավունքը:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ հուշարձանների պահպանական գոտիները, բնակավայրերի պատմամշակութային հիմնավորման նախագծերը ելակետային հիմք են տարածաշրջանների, քաղաքների և մյուս բնակավայրերի մանրամասն հատակագծման և կառուցապատման նախագծերի համար: Նշված գոտիների տարածքներում հողային, շինարարական և այլ տեսակի

աշխատանքների, ինչպես նաև տնտեսական գործունեության իրականացումը կատարվում է լիազորված մարմնի թույլտվությամբ: Նույն օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական, գյուղատնտեսական և այլ կարգի աշխատանքների համար հողի հատկացումները, կառուցապատման, ինժեներատրանսպորտային հաղորդակցության ուղիների նախագծերը սահմանված կարգով համաձայնեցվում են լիազորված մարմնի հետ: Եթե նշված աշխատանքները կարող են վտանգել այդ տարածքներում գտնվող հուշարձանների պահպանությունն ու անվթարությունը, նախապես, աշխատանքների պատվիրատուի միջոցներով իրագործվում են հուշարձանների պահպանությունն ու անվթարությունն ապահովող միջոցառումներ՝ հետախուզություն, պեղումներ, վերականգնման աշխատանքներ, բացառիկ դեպքերում՝ տեղափոխում և լիազորված մարմնի կողմից առաջարկվող այլ աշխատանքներ:

«Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» և «գ» կետերի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են՝ ա) կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան (բացառությամբ սույն հոդվածի երրորդ պարբերության «ե» և «ե.1» կետերով նախատեսված դեպքերի), շինարարության թույլտվության հիման վրա, գ) քաղաքաշինական գործունեություն (բացառությամբ սույն օրենքի 23 հոդվածով սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) իրականացնել բացառապես հաստատված քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան: Նույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը: Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն ինչպես նոր կառուցապատվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ իրավաստեղծ մարմնի, դրա իրավահաջորդի կամ համապատասխան լիազորություններով օժտված մարմնի որոշմամբ նորմատիվ իրավական ակտի կամ նորմատիվ իրավական ակտի մասի գործողությունը կարող է կասեցվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Տվյալ պարագայում կառուցապատողը Հրազդան համայնքի Քաղսի բնակավայրի 1-ին փողոցի 62/1 հասցեում տրամադրված թույլտվության պայմաններում շինարարական աշխատանքները իրականացնել է առանց լիազոր մարմնի հետ համաձայնեցման, ուստի անհրաժեշտ է կասեցնել տրամադրված շինարարության թույլտվության գործողությունը կասեցնել մինչև հայտնաբերված թերությունների վերացումը:

Ուստի վարչական մարմինը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 35-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնի պետի գրությունը.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Կասեցնել Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, Քաղսի, 1-ին փողոց, 62/1 հասցեում կառուցապատող Միտյա Խուրշուդյանին տրված Հրազդան համայնքի ղեկավարի 2023 թվականի հոկտեմբերի 10-ի N 117 շինարարության թույլտվության գործողությունը:
2.Շինարարության թույլտվության գործողությունը կասեցնել մինչև հայտնաբերված թերությունների վերացումը:
3.Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Գուրգեն Հակոբյանին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել ՀՀ ԿԳՄՍ նախարարություն՝ լիազոր մարմնի համաձայնությունը ստանալու խնդրանքով:
4.Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Գուրգեն Հակոբյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Միտյա Խուրշուդյանին պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

05 մարտի 2024թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ու Մ*

*05 մարտի 2024թվականի N 272*

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 189-Ն որոշման հավելվածը.

*Ո Ր Ո Շ Ու Մ  Ե Մ՝*

1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.
1)օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի՝ 1 (մեկ) հատ,
2)օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի՝ 1 (մեկ) հատ,
3) տեխնիկական հեղուկների վաճառք՝ 1 (մեկ) հատ,
4)հանրային սննդի կազմակերպու և իրականացում՝ 2 (երկու) հատ,
5)ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացման՝ 2 (երկու) հատ,
6)արտաքին գովազդ՝ 3 (երեք) հատ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

05 մարտի 2024թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2024 թ. մարտ 05-ի
N 272 որոշման

# ՑՈՒՑԱԿ
# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպաիր ավական տեսակը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ, գովազդի մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ա/Ձ «Քնարիկ Ավետիսյան Խանջանի» | Ք. Հրազդան, Ջրառատ տուն 79 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս շենք 29, 1-ին հարկ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 2 | Ա/Ձ «Քնարիկ Ավետիսյան Խանջանի» | Ք. Հրազդան, Ջրառատ տուն 79 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս շենք 29, 1-ին հարկ | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 3 | Ա/Ձ «Սամվել Ալոյան» | Ք. Սևան | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 11-րդ դպրոցի հարևանությամբ | ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում | մինչև 500 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 4 | Ա/Ձ «Սամվել Ալոյան» | Ք. Սևան | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 11-րդ դպրոցի հարևանությամբ | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 500 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5 | Ա/Ձ «Գագիկ Մուրադյան Հրաչիկի» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 254/18 | Ք. Հրազդան, Ծաղկաձորի օղակաձև խաչմերուկ | ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 6 | Ա/Ձ «Գագիկ Մուրադյան Հրաչիկի» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 254/18 | Ք. Հրազդան, Ծաղկաձորի օղակաձև խաչմերուկ | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 7 | Ա/Ձ «Թանգի Աղասարյան Օսիպի» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 20/16 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 4-րդ փ., 3-րդ նրբ., 2/2 | տեխնիկական հեղուկների վաճառք | հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |
| 8 | Ա/Ձ «Թանգի Աղասարյան Օսիպի» | Ք.Երևան | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 4-րդ փ., 3-րդ նրբ., 2/2 | արտաքին գովազդ | 1 քառ/մ | 2024 թվականի տարվա համար |
| 9 | «Նատալի Ֆարմ» ՍՊԸ | | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, Խեչոյան 18 | արտաքին գովազդ | 1 քառ/մ | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 10 | «Էյչ էյ գրուպ» ՍՊԸ | Ք.Երևան | Ք. Հրազդան, Կենտրոն Օգոստոսի 23 | արտաքին գովազդ | 7,93 քառ/մ | 2024 թվականի մարտ ամսվա համար |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

***Ո Ր Ո Շ Ո Ւ Մ***

*05 մարտի 2024թվականի N 273*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով, հիմք ընդունելով Անահիտ Ջառահյանի 2024 թվականի հունվարի 16-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Անահիտ Հովսեփի Ջառահյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 17042023-07-0132, գաղտնաբառ՝ L54BBMZLIUJQ) Հրազդան քաղաքում գտնվող 0.95764հա մակերեսով նպատակային նշանակությունը փոփոխված արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Գործարանային փողոց 6:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

05 մարտի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*05 մարտի 2024թվականի N 274*

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերով, հիմք ընդունելով Անուշ Նիկոյանի 2023 թվականի օգոստոսի 16-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված ԱԶ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023PGKCLT ծածկագիրը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2024 թվականի հունվարի 26-ի թիվ 52 մասնագիտական եզրակացությունը.

## *Ո Ր Ո Շ Ու Մ  Ե Մ՝*

1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 07-001-0111-0001 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 23/2:

2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 23 շենքի 14 բնակարանի բնակչուհի Անուշ Նիկոյանի կողմից ինքնակամ կառուցված Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 23/2 հասցեում գտնվող 22.3քմ արտաքին մակերեսով բնակելի նպատակային նշանակության ավտոտնակը ճանաչել օրինական:

3.Ավտոտնակը և դրա սպասարկման ու պահպանման համար նախատեսված 22.3քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

05 մարտի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*05 մարտի 2024թվականի N 275*

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ
ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջով և 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնով, հիմք ընդունելով <<Հաբշին նախագիծ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված տեխնիկական եզրակացությունը, ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված շինության հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023HLZQMP ծածկագիրը և Անդրանիկ Հովհաննիսյանի 2021 թվականի հունվարի 29-ի դիմումը.

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝</u>*

1.Երևան քաղաքի Խորենացու 3 նրբանցք 1 տան բնակիչ Անդրանիկ Մեխակի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի վկայական N 2461823, տրված՝ 2007 թվականի օգոստոսի 9-ին) Հրազդան քաղաքի Հարավային թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Մ.Սարյան փողոց 5:

2.Օրինական ճանաչել Երևան քաղաքի Խորենացու 3 նրբանցք 1 տան բնակիչ Անդրանիկ Մեխակի Հովհաննիսյանի կողմից Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Մ.Սարյան փողոց 5 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող (սեփականության իրավունքի վկայական N 2461823, տրված՝ 2007 թվականի օգոստոսի 9-ին) բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 65.25քմ արտաքին մակերեսով բնակելի տունը՝

օրինականացման վճարը սահմանել 84 900 (ութսունչորս հազար ինը հարյուր) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504 գանձապետական հաշվին:
3.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:
5.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

05 մարտի 2024թ.
ք.Հրազդան